

«ՀԱՅ պատմության ինստիտուտ
«ԱՅԱՍ» ծովային հետազոտությունների ակումբ

Միջազգային գիտաժողովի
ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ

**ԾՈՎԻ ՄՏԱԿՈՒՅՑԹ - ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ՄՏԱԿՈՒՅՑՆԵՐԻ
ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ**



Институт Истории НАН РА
Клуб Морских Исследований «АЙАС»

ТЕЗИСЫ
Международной научной конференции

**КУЛЬТУРА МОРЯ - КУЛЬТУРА ЧЕЛОВЕЧЕСТВА
В ДИАЛОГЕ ЦИВИЛИЗАЦИЙ**

Միջազգային գիտաժողովի հիմնադրույթներ

**Տիեզերական օվկիանոսի և Երկնային ծովի վերաբերյալ
պատկերացումները հայոց դիցամտածողության մեջ**

Գոհար ՎԱՐԴՈՒՄՅԱՆ
<<ԳԱԱ Պատմության ինստիտուտ
gohar.vardumyan@gmail.com

**Представления о космическом океане и небесном море в
армянском мифомышлении**

Гоар ВАРДУМЯН
Армения, Институт истории НАН

Զրի տարերքին առնչվող պատկերացումները տարաբնույթ դրսեւրումներ են ստացել դիցարանության մեջ, որոնցից տիեզերական օվկիանոսը (Արզու, Օվկիանոս) և Երկնային ծովը (Ծիրանի ծով) ներկայացնում են նախաստեղծ ջրերը, նույնանալով Քառուին, որից սկիզբ է առել Կոսմոսը:

Ա) Հայոց առասպելաբանության մեջ տիեզերական օվկիանոսով են անցնում Երկնային ճամփորդները՝ Արևը, Լուսինը, աստղերը, այնտեղ են գտնվում աստղատները: Տիեզերական օվկիանոսի վերաբերյալ պատկերացումները մարմնավորվել են Հայկ նահապետի կերպարում, ուրվագծելով հայոց հնագույն պատմության տարածական ու ժամանակային սկիզբը:

Բ) Տիեզերական օվկիանոսի աստվածներից են Երկնային ջրերի իմաստուն հովանավոր Հայան և ծիրանի ծովից ծնունդ առնող Արև-Վահագնը: Տիեզերական օվկիանոսում են բնակվում Արեգակնային համակարգության մոլորակներն ու լուսատուներն անձնավորող բիայնական դիցարանի Խալդին՝ Լուսնագ-Յուպիտերը, Ծիվինին՝ Արևը, Ծիելարդին՝ Լուսինը, Սարդին՝ Արուայակ-Վեներան, Ծինուարդին՝ Երևակ-Սատուրնը, Արդին՝ Փայլածու-Մերկուրին:

Գ) Տիեզերական օվկիանոսի մաս է կազմում Երկնային ծովը՝ անձրևի, խոնավության, ջերմության, կյանքի աղբյուրը, ո-

Тезисы международной научной конференции

рот-կայծակի անձնավորումը, որպիսիք են Թեյշեբան, Արամազդը: Երկնային ու երկրային ջրերը արտացոլում են գտել Երվանդունի-Արտաշիայան շրջանի Անահիտ և Աստղիկ դիցուհիների կերպարներում, որոնք հանդես են զայիս իրրև թերթության, արգասավորության, պտղաբերության հովանավորներ:

Տիեզերական օվկիանոսի և երկնային ծովի վերաբերյալ պատկերացումները հին հայոց դիցամտածողության մեջ արտացոլում են մեր հեռավոր նախնիների տիեզերաբանական գիտելիքները և դրանց հետ կապված հավատալիքները, պաշտամունքը:

Միջազգային գիտաժողովի հիմնադրույթներ

**Երկնային լուսատուներն ու երևույթները Հայաստանի
Ժայռապատկերներում**

Կարեն ԹՈԽԱՏՅԱՆ
<<ԳԱԱ Պատմության ինստիտուտ
karen.tokhatyan@gmail.com

**Небесные светила и явления в наскальном искусстве
Армении**

Karen TOXATYAN
Армения, Институт истории НАН

Հայոց մշակույթը լի է Տիեզերքին առնչվող իրողությունների արտացոլումներով: Դրանց պատկերային արտահայտություն են նաև ժայռապատկերները, որոնցում բազմաթիվ են երկնային լուսատուներն ու երևույթները.

Ա/ **Արեգակի** նշաններն ամենաառատն են ժայռապատկերներում, հաճախ է հանդիպում Արեկի ու հավերժության խորհրդանիշ կեռիսաչը: Կան **Լուսնի** տարբեր փուլերը մեկտեղ ցուցադրող պատկերներ: Օդակների որոշ խմբեր կարող են մոլորակներ նշանակել: **Վատդերը և աստղախմբերը** ներկայացված են 4-6-8 ճառագայթանի աստղանշաններով: Կա Հայկ (Օրիոն) և Ցուլ **համաստեղությունները** մեկտեղ ցուցադրող պատկերագույզ և թոշնի սխեմային մի պատկեր, որը նման է Արծվին: Համաստեղությունը պատկերվել է ոչ միայն կենդանի էակի, այլև իրական՝ քարտեզային տեսքով: Սևսարի երկնադիտարանում գծագրված է երկնուրտի մի ընդարձակ տիրույթ՝ ինը համաստեղություն և Ծիր Կաթնի մի հատվածը, իսկ Վարդենյաց լեռնանցքի քարասալերին պահպանվել են երեք համաստեղության՝ մ.թ.ա. III հազ. արված պատկերներ: Սևսարում կա Ծիր Կաթնի լուսավոր հատվածները նշող ևս երկու մեծ կետախումբ: Երկրագունդը պատկերվել է խաչամիջուկ սկավառակի

Тезисы международной научной конференции

տեսքով: **Արևածագի ու մայրամուտի կետեր են փորագրված որոշ ժայռաբեկորների վրա:**

Բ/ Երկնային երևոյթների պատկերումը ևս կարևորվել է հեռավոր անցյալում: Արևի ու Լուսնի **խավարման** արտահայտություն կարող են լինել լուսնափուլեր ցուցադրող որոշ պատկերներ: **Գերնոր աստղի** բռնկումը պատկերվել է ճառագայթավոր սկավառակի տեսքով: Երկնաքարի անկում խոշոր ասուպի երևոյթ է պատկերված Սևսարի համայիրում: **Գիսավոր** կարող են լինել ժայռանկարի հորինվածքի վերին մասում առկա պոչավոր օղակները: **Մթնոլորտային երևոյթներից** գերակշռում է կայծակը, կան նաև ամպ ու անձրև ու ծիածան հիշեցնող ժայռապատկերներ:

Գ/ Ժայռապատկերներում զիտական մտքի բազմաթիվ դրսեւրումներ կան: Քարեղեն **օրացույցներն** արտահայտում են 14, 27 և 29 գծիկներով լուսնային ամիս, 30, 31 փոսիկներով արեգակնային ամիս և 12 փոսիկներով տարի: Որոշ պատկերներ կողմնացուցի դեր են ունեցել՝ կան ըստ Երկրի կողմերի ուղղված խաչանման նշաններ: **Աստղագիտական գրանցումներով** ժայռապատկերները տեղեկություններ են կրում լուսատուների դիրքի և տեսանելիության մասին: Ժայռերին փորագրված են **Կենդանաշրջանի նշաններ** և աստղագիտական իմաստ կրող այլ գաղափարագրեր, որոնք հարատևել են հայ միջնադարյան մատենագրության մեջ:

Հայոց աշխարհի բյուրավոր ժայռապատկերները մատնանշում են նախնյաց աշխարհընկալման մեջ երկնային երևոյթների և լուսատուների, հատկապես՝ Արևի, աստղերի ու համաստեղությունների նշանակալի տեղը:

Միջազգային գիտաժողովի հիմնադրույթներ

**Կիլիկյան Հայաստանի երաժշտական մշակույթը.
Ներսես Շնորհալի**

Արմի ՎԱՐԴՈՒՄՅԱՆ
Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան
avardumyan8@gmail.com

**Музыкальная культура Киликийской Армении.
Нерсес Шнорали**

Арти ВАРДУМЯН
Армения, Институт древних рукописей Матенадаран
имени св. Месропа Маштоца

Կիլիկյան Հայաստանը իր մշակութային ծաղկմանը հասավ XII դ. մեծատաղանդ երգահան Ներսես Դ Շնորհալու կամ Ներսես Կլայեցու (Երգեցող) օրոք: Նա ծնվել է Ապիրատ Պահլավունի «մեծագօր» իշխանի ընտանիքում: Ժամանակակիցների հավաստմամբ նա զերապայծառ վարդապետ էր, մեծահոչակ բանաստեղծ և երաժիշտ, ում տաղաչափական արվեստը արժանի էր լավագույնը համարվել ոչ միայն հայերի, այլև հույների ու լատինացոց մեջ:

Տարիներ շարունակ երիտասարդ Շնորհալին հորինել ու կատարել է հոգևոր երգեր, վերախմբագրել հայոց Շարակնոցը, ինչպես նաև համալրել է հայոց Պատարագի երգեցողությունը բագմաթիվ նշանակալի սրբասացություններով: Շնորհալու ստեղծագործական ներկապնակը հարուստ է, նրա գրչին են պատկանում Արևագայի երգերը: Շնորհալին զարգացած միջնադարի այն բագմակողմանի երաժիշտն էր, ով ոչ միայն հանճարեղ երգահան էր, այլև անգուգական կատարողն էր իր երգերի, ինչպես նաև նշանավոր աստվածաբան: Նա հույժ ծաղկեցրեց նաև հայոց խագագրության արվեստը՝ դրա տիրապետումը պարտադիր դարձնելով բոլոր քահանաների համար:

Ներսես Շնորհալին հայ հոգևոր երգաստեղծության ոճը հասցեց իր զարգացման զագարնակետին՝ Կիլիկյան Հայաստանի երաժշտական արվեստը բարձրացնելով այնպիսի մակարդակի, որով նախանշվեց հետագայում Վերածննդին հատուկ մարդասիրական շարժման միջազգային հունը: